150. ՀԻՆՁ ԱՆԵՍ, ՔԵԶ ԿԱՆԵՍ

Մին թաքավըրի հրաման ա տամ, վըր ամենալա̈վ գյա̈րբա̈ կյուրծողըն ամենալա̈վ գյա̈րբա̈ն քըթենա̈ն, պիրին տան ծի̈րա̈ն։ Թաքավըրերեն մարթիքյը լոխ քյինա̈մ ըն շոռ կյամ, շոռ կյամ, կարում չըն քթենա̈ն։ Մին ժուլիկ քյինա̈մ ա մին քյասիբ մարթ քթենո̈ւմ, տու մի ասել, ամենալավ գյա̈րբա̈ կյործողն էլ տա յա ինո̈ւմ, օղում ա սրա գյա̈րբա̈ն կյուղանա, տանե տա թաքավըրերենը։ Էտ քյա̈սիբն էլ կլո̈խ ա ինգյո̈ւմ, գյա̈րբա̈ն պըենդ տըեղ պահում։ Վերջը, տա մին օր գյա̈րբա̈ն յոր ա օնում, տանում թաքավըրերեն կոշտը, էտ ժուլիկն էլ նհետն ա քյինա̈մ։ Թաքավըրերեն մարթիքյը գյա̈րբա̈ն քցո̈ւմ ըն ամենալավ տըեղը։ Թաքավըրերն ասում ա.—էս գյա̈րբա̈ն կյործողըն թուղեցեքյ կյա̈ ո̈րա̈ն ասած տըեղը քցի։ Էտ մարթին վար պիրում ըն, տա ասում ա.—էտ գյա̈րբա̈ն վըեչ մին տըեղ էլլա քցիքյվուչ, ետ ա տըեռնում, թաքավըրերեն թա՝ կըպահես, վար տղաս մըեռնե, մաչին պըտատես։ Թաքավըրերը դո̈սաին հրաման ա տամ, վըր էտ մարթին կլո̈խը կտրեն։ Էտ ժուլիկը քյինա̈մ ա մոտանում, ասում թաքավըրերն ապրած կենա, էտ մարթին ծըռքապենը լա̈վ, սըերտըն էլ պարի յա, բայց լո̈ղին չար ա, տըրա հետե յել քյա̈սիբ ա ապրում, մին սո̈րո̈՝ խուխատար ա, մեխկ ա, պեց թուղեցեքյ, քյինա̈ ո̈րա̈ն խոխեքյը պահե։ Էտ մարթին պեց ըն թողում, տըրա խալաթը տամ էտ ժուլիկին։ Գյա̈րբա̈ կյործողն էլ տերտակ ետ ա տըեռնամ, քյինա̈մ տոն։